# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## "STARMUS FESTIVAL 2021" ՓԱՌԱՏՈՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 50 ՏԱՐԻ ՄԱՐՍԻ ՎՐԱ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարար Արայիկ Հարությունյանի և «Starmus Universe 2007 S.L.» կազմակերպությունը (այսուհետ՝ "STARMUS") ի դեմս համատեղ կառավարիչ Գարիկ Իսրայելյանի (միասին՝ Կողմեր)

- ցանկանալով մշակել STARMUS փառատոնի հայեցակարգը՝ նպատակ ունենալով հետազոտությունները տարածել ակադեմիաների, դպրոցական աշակերտների, բարձր տեխնոլոգիաների ոլորտի նորաստեղծ ձեռնարկությունների, ուսանողների և ուսուցիչների շրջանակներում
- տեսլական ունենալով ստեղծել երիտասարդ սերնդի համար նոր օրինակներ, ոգեշնչել գիտելիքներ ձեռքբերելու ցանկություն, բարձրացնել գիտելիքների տարածման և դասավանդման մակարդակը և գիտելիքները հասանելի դարձնել բոլորին

կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ «STARMUS FESTIVAL 2021. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնը (այսուհետ՝ Միջոցառում) 2021 թվականի սեպտեմբերին Երևանում կազմակերպելու նպատակով:

### I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «STARMUS FESTIVAL 2021» ծրագրի հիմնական նպատակն է մասնագիտացված գիտելիքների փոխանցումը: Այն կազմակերպվում է որպես համագումար և գիտաժողովների շարք, որոնց շուրջ մեկ շաբաթ նշանավոր գիտնականների մասնակցությամբ անց են կացվում նաև այլ միջոցառումներ՝ այցելություններ, ցուցահանդեսներ, մրցույթներ, վարպետության դասեր, բանավեճեր, կլոր սեղաններ և քննարկումներ, որոնք բոլորն առնչվում են փառատոնի հիմնական

թեմային և միացնում են գիտությունն, արվեստը և երաժշտությունը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են մի շարք ցուցահանդեսներ և համերգներ:

2. «STARMUS»-ի թիրախն ու նպատակն է Հայաստան բերել 3000-5000 այցելու Եվրոպայից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից և այլն՝ փառատոնին և միջոցառումներին մասնակցելու համար:
3. «STARMUS»-ը կմշակի նաև անվճար ծրագիր բաց տարածքներում, դպրոցներում և համալսարաններում՝ նպատակ ունենալով փառատոնի գործողություններում ներգրավել շուրջ 100.000 ՀՀ քաղաքացիների:

## II.ՆՊԱՏԱԿԸ

4. Սույն համաձայնագրի նպատակն է Նախարարության մասնակցությունը «STARMUS FESTIVAL 2021» փառատոնին: Նախարարությունը փառատոնը Հայաստանում կազմակերպելու նպատակով վճարում է մասնակցության վճար, իսկ «STARMUS»-ը կազմակերպում է միջոցառումը, տարածում և գովազդում է Նախարարության անվանումը, դրա գործընկերներին և Հայաստանի Հանրապետությունը:

## III. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. «STARMUS»-ի կողմից համաձայնագրի նպատակի կատարման համար Նախարարությունն ուղիղ «STARMUS»-ին է վճարում երկու միլիոն եվրո (**2.000.000 €**) մասնակցության վճար՝ համաձայն ստորև ներկայացված ժամանակացույցի.
   1) Սկզբնական վճարում՝ հինգ հարյուր հազար եվրո (**500,000 €**)՝ Համաձայնագրի ստորագրումից 30 օրվա ընթացքում,
   2) Հարյուր հազար եվրո (**100,000 €**)՝ մինչ 2020 թ. սեպտեմբերի 2-ը,
   3) Երկու հարյուր հազար եվրո (**200,000 €**)՝ մինչ 2020 թ. նոյեմբերի 2-ը,
   4) Ութ հարյուր հազար եվրո (**800,000 €**)՝ մինչ 2021 թ. մարտի 15-ը,
   5) Երեք հարյուր հազար եվրո (**300,000 €**)՝ մինչ 2021 թ. ապրիլի 2-ը,

6) Վերջնական վճարում՝ հարյուր հազար եվրո (**100,000 €**)՝ մինչ 2021 թ. մայիսի 2-ը:

## IV. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է միջոցառման ավարտից 45 օրվա ընթացքում, եթե Նախարարությունը լիարժեք կատարել է իր բոլոր ֆինանսական պարտավորությունները՝ երրորդ բաժնում սահմանված վճարման պայմաններին համապատասխան, և «STARMUS»-ը կազմակերպել է Միջոցառումը:

## V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. **Նախարարությունը համաձայնում է.**
1) «STARMUS»-ին փոխանցել սույն համաձայնագրի երրորդ բաժնում սահմանած մասնակցության վճարը՝ համաձայն վճարման պայմանների
2) «STARMUS»-ի հետ համատեղ ստեղծել և ձևավորել Հայաստանի Հանրապետության, Նախարարության և Միջոցառման գովազդի ու տարածման նախագիծը՝ կողմերի սահմանած պայմաններով, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս
3) Ակտիվորեն համագործակցել «STARMUS»-ի հետ՝ փառատոնի մասին տեղեկությունը տարածելով Հայաստանի դպրոցների և համալսարանների միջոցով
4) Ակտիվորեն համագործակցել «STARMUS»-ի հետ՝ փառատոնի մասին տեղեկությունը տարածելով Հայաստանի կազմակերպությունների և հնարավոր գործընկերների միջոցով
5) Կապ հաստատել սփյուռքի հետ՝ Միջոցառումը տարածելու և հայ ուսանողների փառատոնին մասնակցությունը խրախուսելու համար
6) Առաջարկել «STARMUS»-ին տեղական արտադրությունը կառավարող կազմակերպություններ

7) Միջնորդել Երևանից դուրս փառատոնի միջոցառումները (աստղային երեկույթ, աստղալուսանկարչության դպրոց, էքսկուրսիաներ և այլն) կազմակերպելու համար անհրաժեշտ թույլտվություններ ձեռքբերելու հարցում:

**8. «STARMUS»-ը համաձայնում է.**

1) Պլանավորել և կազմակերպել Միջոցառումը և իրականացնել Միջոցառմանն առնչվող գովազդային գործողությունները՝ տարածելով Հայաստանի Հանրապետության և Նախարարության պատկերները՝ համաձայն Կողմերի հաստատած պահանջներին և պայմաններին:
2) Ստեղծել գեղարվեստական ծրագիր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որտեղ 100000 մարդ կարող է իմանալ վերջին գիտական հետազոտությունների և բացահայտումների մասին (տիեզերագիտություն, արհեստական բանականություն, կենսատեխնոլոգիա, ֆիզիկա, գենետիկական ճարտարագիտություն, նյարդագիտություն, համակարգչային տեխնիկա, քիմիա, գերհամակարգչություն և այլն):
3) Տարածել Մարսի առաջին լուսանգնացի ստեղծող Ալեքսանդր Քեմուրջյանի անունը, տոնել նրա 100-ամյա հոբելյանը և կազմակերպել նրա հիշատակին նվիրված կլոր սեղան: «STARMUS»-ը կտարածի նաև նրա անունը միջազգային հարթակներում ամբողջ աշխարհում՝ առաջին դասի զանգվածային լրատվամիջոցներում (National Geographic, Discovery Channel, Wired և այլն) հատուկ հոդվածներով և հրապարակումներով:
4) Կազմակերպել դասախոսություն և կլոր սեղան՝ նվիրված հայտնի գիտնական և իրավապաշտպան Անդրեյ Սախարովին: Տոնել նրա 100-ամյա հոբելյանը հատուկ նստաշրջանով և ծրագրով: «STARMUS»-ը կլոր սեղան կկազմակերպի Նոբելյան մրցանակների դափնեկիրների, կինոռեժիսորների, արվեստագետների և իրավապաշտպանների մասնակցությամբ:
5) Ապահովել միջոցառման թեմային վերաբերող ոլորտներում ներգրավված ազգային և միջազգային ճանաչված գործիչների մասնակցությունը: Դրանց թվում «STARMUS»-ը կապահովի համաշխարհային մակարդակի գիտնականների (այդ թվում՝ 10 Նոբելյան դափնեկիր), արվեստագետների,

տիեզերագնացներ և տիեզերական տեխնոլոգիական ընկերությունների ղեկավարների, ինչպես նաև աշխարհի լավագույն գիտական հաստատությունների (CERN, ESA, NASA, ROSCOSMOS և այլն) նախագահների և տնօրենների մասնակցությունը:

6) «Starmus Festival 2021» փառատոնի գիտական ծրագրի համար հրավիրել համաշխարհային մակարդակի բանախոսների և գիտնականների: Գործընթացը ներառում է Կողմերի հաստատված ընդհանուր բյուջեի շրջանակներում առանձին կողմերի հետ պայմանագրերի բանակցում և կնքում:

7) «Starmus Festival 2021» փառատոնի շրջանակներում ելույթ ունենալու համար հրավիրել լավագույն միջազգային արվեստագետների և երգիչների: Գործընթացը ներառում է Կողմերի հաստատված ընդհանուր բյուջեի շրջանակներում առանձին կողմերի հետ պայմանագրերի բանակցում և կնքում:

8) Հայաստան հրավիրել առաջին կարգի լրագրողների (The Guardian, The Sun, Forbes, Times, Newsweek, Russia Today, El Pais, New York Times, Washington Post, Bloomberg, Reuters և այլն):

9) Կազմակերպել և իրականացնել դասախոսների, արվեստագետների և բարձրաստիճան անձանց տեղափոխումը իրենց բնակավայրերից դեպի Հայաստան և հակառակը:

10) Կազմակերպել և իրականացնել դասախոսների, արվեստագետների և բարձրաստիճան անձանց կեցությունը Հայաստանում:

11) Լոնդոնում, Նյու Յորքում, Մոսկվայում, Բրյուսելում, Սինգապուրում և այլ խոշոր քաղաքներում կազմակերպել գովազդային միջոցառումներ և մամուլի լուսաբանում: ՀՀ իշխանությունների ներկայացուցիչները նույնպես հրավիրված կլինեն մասնակցելու յուրաքանչյուր միջոցառմանը: Նպատակն է՝

ա. տարածել Նախարարության անվանումը որպես գործընկեր, իսկ Երևանը և Հայաստանը՝ որպես փառատոնի անցկացման վայր,

բ. հովանավորության շրջանակներում համաձայնեցված պահանջներին համապատասխան՝ տարածել միջազգային և ազգային հովանավորների անվանումները,

գ. գովազդային բոլոր նյութերում նշել պետական գործընկերներին, միջազգային և ազգային հովանավորներին:

12) Ապահովել փառատոնի ընթացքում բոլոր միջոցառումների կազմակերպումը:

13) Կազմակերպել և իրականացնել փառատոնի մաս կազմող բոլոր սոցիալական միջոցառումները (աստղային երեկույթ, աստղալուսանկարչության դպրոց, գալա ընթրիք, և այլն):

14) Կազմակերպել առնվազն երկու համերգ՝ նվազագույնը 10000 հանդիսատեսի համար:

15) Կազմակերպել անվճար քաղաքային ծրագիր՝ 100000 հանդիսատեսի համար՝ ուսանողների և աշակերտների հետ համագործակցությամբ:

16) «STARMUS»-ի հովանավորության փաթեթը.

ա. «STARMUS»-ը վերապահում է 300 «STARMUS» փաթեթ բոլոր հանրային ներդրողների և հովանավորների համար: «STARMUS» փաթեթները ներառում են մասնակցություն համաժողովներին, ցուցահանդեսներին, համերգներին և սուրճի ընդմիջումներին: Նախարարությունը որոշում է ինչպես են այդ փաթեթները բաշխվում «Starmus Festival 2021» փառատոնի կազմակերպման գործում ներգրավված պետական և մասնավոր կազմակերպությունների միջև:

բ. Լրացուցիչ 300 «STARMUS» փաթեթներ վերապահվում են «STARMUS» փառատոնի հատուկ հյուրերի համար:

## VI. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Կողմերը պահպանում են իրենց անունների, լոգոների, ապրանքանիշների հետ կապված բոլոր իրավունքները՝ հեղինակային իրավունքներին վերաբերվող օրենքներին համապատասխան:

10. Կողմերը չեն կարող վտանգել կամ վատաբանել միմյանց ապրանքանիշերը, լոգոները և այլն:

11. Ստորագրելով սույն Համաձայնագիրը, Կողմերը միմյանց իրավունք են տալիս օգտագործել միմյանց ապրանքանիշերն ու լոգոները՝ «Starmus Festival 2021» փառատոնի շրջանակներում տեղեկատվության և գովազդի վերաբերյալ իրենց

ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Ապրանքանիշերի կամ տարբերակիչ նշանների օգտագործումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

12. Այդ նպատակով, Նախարարությունը հաստատում է, որ իր ապրանքանիշերի իրավասու սեփականատերն է, և դրանց օգտագործումը «STARMUS»-ի կողմից չի խախտում երրորդ անձանց իրավունքները: Նախարարությունը ապահովում է «STARMUS»-ի ապահովությունը երրորդ կողմի ցանկացած հայցերից, որոնք ուղղված են երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքի խախտմանը:
13. Նախարարությունը «STARMUS»-ին է տրամադրում բոլոր փաստաթղթերը և պատկերները, որոնք անհրաժեշտ են իր կորպորատիվ պատկերը ճիշտ պատկերացնելու համար՝ Կողմերի համաձայնեցված տարածման և գովազդի պլանը իրականացնելու համար:

## VII. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

14. Սույն Համաձայնագրի բոլոր գործողությունների տվյալների պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության և վավերացված միջազգային ընթացակարգերի համաձայն:

## VIII. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

15. Սույն Համաձայնագրի Կողմերը համաձայնում են պահպանել սույն Համաձայնագրի պայմանների գաղտնիությունը և չեն կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն բացահայտել Համաձայնագրի դրույթները երրորդ անձանց: Կողմերը ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները՝ դրույթների գաղտնիությունը ապահովելու համար:
16. Կողմերը չեն բացահայտում և տեղեկատվություն չեն տրամադրում Համաձայնագրի վերաբերյալ, բացառությամբ մյուս կողմի հետ համաձայնեցված լինելու կամ իրավական պարտավորությունների կատարման դեպքերի:

17. Գաղտնիությունը չի տարածվում ընկերությունների միջև համագործակցության մասին տեղեկատվության բացահայտման վրա՝ Կողմերի միջև նախապես համաձայնեցված լինելու դեպքում:
18. Համաձայնագրի լուծման դեպքում, Կողմերը անհապաղ հանձնում են իրենց կամ իրենց աշխատակիցների մոտ առկա գաղտնի տեղեկությունները:

## IX. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

19. Համաձայնագիրը դադարեցվում է

1) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
2) Անհաղթահարելի ուժի ազդեցության (Ֆորս-մաժոր), նոր տիպի կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակի դեպքում, որն անհնար է դարձնում նախագծի իրականացումը: Միջոցառման չկայացման դեպքում, «STARMUS»-ը պարտավորվում է վերադարձնել Նախարարության կողմից տրամադրված ամբողջ գումարը:
3) Եթե Կողմերից որևէ մեկը չի կատարում իր պարտավորությունները, և եթե այդ Կողմը, մյուս Կողմի բողոքից հետո 15 օրվա ընթացքում չի շտկում իր պարտավորությունների շրջանակներում բողոքի առարկա հանդիսացող խնդիրները:

20. Եթե «STARMUS»-ը չի կատարում սույն Համաձայնագրի 8-րդ կետի բոլոր պարտավորությունները, որի արդյունքում Միջոցառումը չի կազմակերպվում, «STARMUS»-ը պարտավորվում է վերադարձնել Նախարարության կողմից տրամադրված ամբողջ գումարը:

## X. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն Համաձայնագրի վերաբերյալ ցանկացած խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

22. Սույն Համաձայնագիրը ստորագրվել է 2020 թ. 25 հունիսի-ին՝ երկու հավասարազոր անգլերեն և հայերեն օրինակներից:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ | «STARMUS UNIVERSE 2007, S.L.» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՌԱՎԱՐԻՉ |
| --- | --- |
| ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԳԱՐԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ |